

20. ՍԱՄԵԼ ԹԱԳԱՎՈՐԻ ՏՂԱՆԵՐ

Կէղնի թագաւոր մը, անուն Սամել։ Կէղնի ուրեն իրեք տղա։ Իրեք տղեն աչ կէղնին չափահաս։ Ատոնց վարժապետ մը կբռնա, զատոնք ՀԿարդցու։ Գիշեր ու ցերեկ դուրս չըն էլնի։ Կէղնին մարդ։

Ըն մեկ օր կէլնին դուրս, կտեսնան օր ախշար լուս ու արև ա ու թագավորին կանիծին, կըսին.—Էդա խագար մեք մըչ իգա ավահուն մեծցեր ինք, ու դու զմըզի դուս չըր հանի, մեք զդա փառավոր դուս տեսնենք ու վայելենք։

Ըն մեկ օր պզտիկ կէլնի կէրթա, հոլ կխաղա։ Կզարկա հոլ, զպառվու մը կուժ կոտրա։ Կըսա.— Աստծուց խընդրիմ, դու հարիր էլի գլուխ քոչար Մհո կյաճկին՝ Գյուլիզար խանըմին հ'էշխլու էղնիս։ Ու յոթ տարի ուր ետևեն օլորտիս, նոր գտնաս։

Ըն մյուս օր հոլ կխաղան։ Ջոջ ախբեր հոլ կզարկա, պառվու կուժ կկոտրա։ Պառավ ուրեն .անեծք կիտա, կըսա.—Աստծուց կխնդրեմ դու նախրորդի ախչիկ առնիս։

Օլոր օր հոլ կխաղան, միջնեկ ախբեր հոլ կզարկա, զպառվու կուժ կկոտրա։

Պառավ կըսա.— Ես անեծք մը քեզի կիտամ. աստծուց կխնդրեմ, օր դու օձուն ռաստ իգաս։

Թագավոր կէլնի կըսա.—Պըտի զիդա քաղաք քաղքով՝ ինչքան ախչիկ մը կա՝ ժողվիմ, զիմ իրեք տղեն սրով կանգրցում, որ մեկին ուրանց ձեռ երկնցուն, պտի զէնի ուզիմ։

Ինչքան ախչիկ մը կա քաղաք, կժողվա, զիրեք տղեն կկանգրցու. զախչկներ թավ կբերա կընցու։

Տղեկներ մեկի չըն հավնի։ Շատ ու քիչ կմնա։ Թագավորի ջոջ տղեն կէրթա կխաղա։ Կտեսնա օր ախչիկ մը նստուկ ամբրոցի տակ, ուրպա կգործա։

Կըսա.— Թագավորի ջոջ տղեն առներ դիս, ես պտի հ՚ըմալ՝ գուրպա գործենք, օր ուր մեկ ջուխտ ածեր տաս օսկի։

Թագավորի ջոջ տղեն կհասկնա։ Ու կիգա թագավորին կըսա.— Հալ ախվալ հըմլա ախչիկ մ՚եմ տեսի։ Անկարելի ա, պտի զէնի ուզիս՝ ընձի։

Էն գահն օր թագավոր կփընտռա զախչիկ, նախրորդի ախչիկ կէղնի։

Թագավոր կըսա.— Ես իմա՞լ զնախրորդի ախչիկ քըզի ուզիս, իմ անվան ի՞նչ ձեռ կիտա։

Կըսա.— Անկարելի ա, պտի ուզիս։

Յոթն օր, յոթ գիշեր զտղի հարսնիք կէնա, նախրորդի ախչիկ կպսակէ չոջ տղի վըրեն։ Ու դախն օր կաչկա, ախչկան ձեռնեն բան չէղնի։ Թունբան մը չը կըռնա կաբա։

Միջնեկ ախբեր կէրթա գետու պռուկ, կտեսնա՝ օձ մը էլավ, զուր օձու շապիկ հանեց՝ հուրնի-հրեղեն ախչիկ մը ուրնե դուս էլավ։

Էդա ախչիկ մտավ գետու մեշ, լողկցավ, տղեն տեսավ օր ջանդակ կնմաներ շուշա։ Դարձավ տղեն էկավ տուն։ Թագավորին պատմեց, ըսեց.— Իլահի ֆլան գետու փլի օձ ընձի բերեք։

Թագավոր զարմացավ ու հերսոտավ, ըսեց.— Ես օձ իմա՞լ ուզիմ քըզի։ Ես թագավոր էղնիմ, իմ անվան ի՞նչ ձեռ կիտա։

Տղեն ըսեց.— Անկարելի ա, պտի ուզիս։

Ճարահատյալ գնաց, զօձ ուզեց բերեց։

Յոթն օր զտղի հարսնիք էնեց. զտղեն, օձ պսակին վըր իրար։ Իրկուն օր էկավ, պառկան։ Ախչիկ զօձու շապիկ հանեց, դնեց դեհ մը, էկավ պառկավ տղի մոտ չուր իլուս։ Լուսուն էլավ տղեն, զուր օձու շապիկ գողցավ, տարավ, թալեց կրակ։ Թագավոր օր էկավ, աչքեց, տեսավ օր հուրնի-հրեղեն հարս մը կայնուկ հ՚ոդի։

Պզտիկ տղեն լուսուն էլավ, զձին հեծավ ու ախշար ընկավ, գնաց։

Շատ ու քիչ գնաց, հար հաղար կոն Մհո էլին ռաստ էկավ։ Էկավ Մհո կոնի դուռ կանավ, ըսեց.— Քիչ մը ջուր տվեք ընձի։

Մհո ախչիկ՝ Գյուլիզար խանըմ բերեց ջուր տվեց էդրան։ Ու հ՚ոդի ձիուց իջավ, էրկու օր հ՚ոդի խոնազ էղավ։

Տղեն ու Գյուլիզար խանըմ ուրանց խոսք մեկնեցին, ուրանց մատնըկներ փոխեցին, ու տղեն դարձավ էկավ։

Ժամանակ մը մեչ հ՚ընցավ, թագավորին պատմեց։ Թագավոր հարսնած ժողվեց ու էլան գացին։ Էն գախն օր գացին, մեկ կոն հ՚ոդի չտեսան, բոլոր բարցած, գացած են։ Դարդակ դարձան, էկան, թագավորին

պատմեցին։ Թագավորի տղեն էլավ, զձին հեծավ ու ընկավ ախշար, օլորտավ։

Գնաց կոնի տեղրանք։ Զուր ձին թողեց արծաց, ու ինք զուր գլուխ դրեց քարին, քնավ։ Երզի մեջ տեսավ, ըսեցին ուրեն՝ «Թուղթ մը կա քո գլխի քարի տակ, հանի կարդացի»։

Ինք քնուց էլավ, զթուղթ վերուց ու կարդաց։ Էն գախ օր տեսավ Գյուլիզար խանըմ դրեր էր. «Ահա մենք գացինք Բառին, դու թե օր զիս կսիրիս ու կուզիս, դու պտի իմ ետևեն իգաս»։

Էն գախ թագավորի տղեն բերեց զձին հեծավ, ճամբախ ինկավ, գնաց։

Շատ ու քիչ գնաց, հովվի մը ռաստ էկավ, բարև տվեց հովվին, բարև առավ, ըսեց.— Կյալո, Բառին, Մհո էլ դուռ չը՞ս գինա դոր ա։

Հովիվ ըսեց.— Քու ի՞նչ պետքն ա, գու հ՝որի՞ կհարցուս։

Ըսեց.— Թե դու կհարցուս իդա Մհո ճյուղն ա, իդա յոթ տարի ես Մհո հովիվն իմ, դռոտ ուլ մը իմ հախ չըտվիր ա։ Գյուլիզար խանըմի սիրուն ու խաթրին, օր ես Գյուլիզար խանըմ ընձի ուզիմ։

Էլավ հեծավ զուր ձին, քշեց գնաց։ Շատ ու քիչ գնաց, էլին ռաստ էկավ։ Քշեց, Մհո կոնի դուռ իջավ։ Բարև տվեց, բարև առավ։ Գյուլիզար խանըմից զուր ուզեց, խմեց ու զիրար չըճանչցան։ Զուր մատնիկ թաչեց մըչ ցասին, Գյուլիզար խանըմ մատնիկ վերուց, տեսավ, նոր ճանչցավ։

Ինք ձիուց իջավ, Գյուլիզար խանըմ բերեց առվուտ դրեց ձիուն, ըսեց.— Բարի խոնախ վըր իմ էրկու լուսուն,— ըսեց,— յոթն օր պիտի իմ պապուն խոնախ էղնիս։

Իրեք. չորս օր հ՝ոդի խոնախ մնաց։ Գյուլիզար խանըմ էլավ ձեռք մը խոռթանակ շոր հագավ ու էլավ Մհո ճակ ու սիլեն կապեց, հ՝իրկուն զՄհո ձին քաշեց հեծավ, էրկուս լե հեծան ընկան ճամբախ, ըսեց.— Ցալա՜ ու աստված։ Քշեցին։

Շատ ու քիչ ճամբախ էկան, հովվին ռաստ էկան ու հովվին բարև տվին, բարև առավ, ըսեց.— Հավար տար քու աղա Մհոին, ահա ես Գյուլիզար խանըմ տարա։

Շատ ու քիչ քշեց էկավ։ Մեր մարդու մը ռաստ էկավ։ Տեսավ օր, էդ մարդ ջրտունք կէներ։ Բարև տվեց, բարև առավ ու զուր չաղրը բացեց, հ՝ոդի նստան։ Շատ ու քիչ հ՝ոդի հանգստան։ Հալվոր անկըշկըլա բերեց թագավորին ու միլոններով օսկի թագավորից անկըշկըլա առավ, ըսեց.— Քու պզտիկ տղեն առեց զԳյուլիզար խանըմ, էկավ, հանդե իմ արտի գլուխ։

Թագավոր էլավ հարսնած քոմեց, էկավ զպզտիկ տղեն, զհարս տարավ պսակեց, յոթն օր զհարսնիք էնեց։

Պզտիկ տղեն աչքեց, տեսավ զուր ախբրտանց դրութեն։ Տեսավ օր ջոջ ախբոր կնիկ միջնեկ ախբոր կնիկ էնիբ էր ուրեն բեսլամա։

Շատ ժամանակ անցավ ընդրանից՝ Գյուլիղար խանըմ պառկավ, բերեց էրկու տղա, էրկու տղի ծամեր լա սուրմա էր։ Տեսավ ջոջ տղի կնիկ լ։ պառկավ, բերեց ջուխտ մը ջան լակոտ։

Ջոջ տղի կնիկ էլավ, գողտուկ զուր էրկու ջան լակոտ փաթթուկ տարավ, դրեց պզտիկ տղի կնկա օրորոցի մեջ, զէրկու սուրմա բըրյամ տղեն բերեց, դրեց ուր օրորոցի մեջ։

Էն գախն օր էկան տեսան, էդի փոխեր է ու իմացան, վերցրին զջուխտ շան լակոտ, դուրս թալեցին ու թագավորի ջոջ տղի կնիկ էլավ, գրեց զէդ էրկու տղեն սանդուխի մեջ ու պահեց։ Օր էկան փնտրելու, գաշեցին, էլավ զէդ սանդուխ գողտուկ տարավ, թալեց գետ, օր ինք ազատեր։

Գետ զէդ սանդուխ տարավ ասրոցուց ջաղցի վանգ ու ջաղցի քար կանավ։ Ջաղցպան էլավ, տեսավ օր սանդուխ ասրովեր է վանգ։ Վերուց սանդուխ բերեց, գախն օր բացեց, տեսավ օր ջուխտ մը սրմա բրյամ տղա մեջ։ Ու տարավ, տվեց ուր կնիկ, պահեց։ Շատ տարի հ՚ընցավ, տղեն չափահաս էղավ։

Ջաղցպան օր տեսավ, միջտ տղեն վարոց կհեծներ, ձիու պես խառ կիտեր։ Տղեկներուն ամեկին ձի մը առավ։ Հ՚ըմեն հաղ կոլորտեն ու կպտտեն։

Շատ ու քիչ ձիավորութեն էնեցին, ձիավորութեն սովրան։ Լուսուն էլան, գացին նեճիր, տեսան օր մարդ մը խաղալ մը կլարեր, ու տղեն զարկեց խաղալ, վերուց։ Խաղլու տեր տղուն տանա տվեց, ըսեց.— Դու ջաղցպանի տղեն էղնիս, ու ես թագավորի տղեն էղնի՞մ, դու զարկիս զիմ խաղալ, վերուս։

Տղեկներ էկան տուն, էկան նստան ու լացին։ Ըսին.— Հալ ու հեքիաթ ըտըմլա բա մը կա։

Մնաց մյուս օր, էմլա էլան գացին նեճիր, տեսան մարդ մը խաղալ կլարեր, չըր կըռներ բռներ։ Տղեն զարկեց զխաղալ, վիրուց։ Էդ մարդ էմլա ուրին տանա տվեց, ըսեց.— Ձեր արժեք ի՞նչ է, զիմ խաղալ կվիրուք, մինչև անգամ չրի հետն եք էկի, ու ջաղցպան զձըղի գտիր ա։

Տղեկներ էկան ու նստան լացին, եղելութեն պատմեցին ջաղցըպնին։ Ջաղցպան ըսեց.—Բան չկա, աստված օղորմած ա։

Ժամանակ մը էտոնք ապրան, էլան վերցին զուրեենց գլուխ ու գացին։

Շատ ու քիչ գացին, քաղաքի մը ռաստ էկան։ Գացին հալվորու մը դռան։

Հալվոր ըսեց.— Դու ի՞նչ մարդ իք։

Ըսեց.— Մեք էրկիր կոլորտինք, ոչինչ, խեղճ մարդ ինք։

Ժամանակ մը էդ հալվորու մոտ հ՚ընցուցին։ Ուրանց պատմություն հալվորուն էնեցին, հալվոր իմացավ։ Օր մը գնաց թագավորի դիվան, տղեկներու պատմություն էնտեղ էնեց. ինչ օր տղեկներ ուրեն պատմած ին։ Միլոններով օսկի հալվորուն տվեց թագավոր, ըսեց.—Դու զէդ տղեկնեը ընձի բերիս։

Տղեկներ օր բերեց, զուրանց գլխու գալած թագավորին պատմեցին։

Թագավոր էլավ զուր ջոջ տղի կնիկ, զէն լա ծով թալեց, բերեց զէդ էրկու տղեն հագուց, զէրկսի հարսնիք լե էնեց։